ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2018թ. հոկտեմբերի 8 N 123

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՇՏԱՐԱԿԻ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ԱՆՎԱՆ Հ. 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Ս. Բարսեղյանի 2018 թվականի հոկտեմբերի 5-ի անձնական դիմումը՝ ***կարգադրում եմ.***

1. 2018 թվականի հոկտեմբերի 20-ից 30-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակի Ներսես Աշտարակեցու անվան հ.1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սուսաննա Բարսեղյանին տրամադրել չվճարվող արձակուրդ:
2. <<Աշտարակի Ներսես Աշտարակեցու անվան հ.1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել ուսումնական գծով փոխտնօրեն Թամարա Սիմոնյանի վրա:

Ժամանակավոր փոխարինող՝ ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2018թ.հոկտեմբերի 8 N 122

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԱՐՄԻՆԵ ԽԵՐԱՆՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 112-րդ հոդվածով և հիմք ընդունելով Ա.Խերանյանի 2018 թվականի հոկտեմբերի 4-ի անձնական դիմումը՝ ***կարգադրում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի խորհրդական Արմինե Խերանյանին 2018 թվականի հոկտեմբերի 8-ից ազատել զբաղեցրած պաշտոնից:
2. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ կատարել վերջնահաշվարկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ժամանակավոր փոխարինող՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ